(առևտուրից)»։ Վարանդայում փեսացուի պատգամները, երբ գնում են հարսնացուի ծնողների մօտ աղջկայ ձեռքը խնդրելու՝ միշտ ասում են. «Աստուած տայ անփոշմանելի սովտա (առևտուր) ինի»։

Ըստ Բենսէի վկայութեան՝ ամուսնութիւնը Բուլանըխում կատարւում է գրեթէ գնմամբ. հարսնախօսութեան ժամանակ սակարկում են, թէ որքան պէտք է վճարի փեսան աղջկայ համար, և այդ գումարը կոչւում է խալանի. սորա առաջին մասը վճարւում է աղջկայ տիրոջը նշանառուէքին, իսկ երկրորդը՝ պսակից 1—2 շաբաթ առաջ [1])։

Նոյն երևոյթը մենք պատահում ենք Ղարաբաղում։ «Գնմամբ ամուսնութիւնը դեռ ևս զոյութիւն ունի նաև Վարանդայում, որ երևում է հղէ կտրել ծիսի մէջ։ Այստեղ աղջկայ և տղի հայրերն ու բարեկամները երկար սակարկելուց յետոյ որոշում են, թէ տղի հայրը որքան փող պիտի տայ աղջկայ հօրը՝ աղջիկը տանելու համար։ Այս գումարը տատանւում է 20—100 բուբլու միջև։ Եւ մինչև որ այդ փողը չյանձնուի աղջկայ հօրը, որ սովորաբար այդ օրն է տեղի ունենում, պսակը չի կարող տեղի ունենալ» [2])։

Գնման գործողութիւնը մի տեսակ դաշինք է, որ կապում են երկու շահագրգռուած կողմերը. իսկ ամեն մի դաշինք կապելուն նախապէս հետևում է սկզբնական համաձայնութիւնը, որ կայանում է որևէ առհաւատչեայի մէջ։ Վերջինս դառնում է մի գրաւական դաշինքի անխախտելի իրականացման համար։ Ահա այս տեսակ բնորոշ գիծ, որ յատուկ է առևտրական և ընդհանրապէս դաշինքների գործողութիւններին, գտնում ենք և հարսի գնման սովորութեան մէջ։ Վարանդայում երկար «հա ու չէ» ասելուց յետոյ, երբ վերջապէս աղջկայ ծնողները յայտնում են իրենց համաձայնութիւնը, ամուսնացող երիտասարդը իւր եղբօր կնոջ հետ, առնելով մի հասարակ 20—60 կոպեկանոց մա-

[1]) Ազգագրական Հանդէս—Բուլանըխ, 1899. գիրք Ե.

[2]) Եր. Լալայեան՝ Վարանդա, եր. 118.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան